

համակրողներու թիւն հազարաւոր, հետեւաբար իւր գալուստը չէր կրնար թագուն մնալ. ամէնքը սիրով ընդունեցան զինքը, եւ տեղւոյն առաջնորդն ու բարեկամը՝ Սահակ Ահագին Արքեպ. հիւրընկալեց զինք: Սարգիս կաթողիկեայ հաւատքը տարածելու միսիննի որոշած էր ինք զինք, իւր պերճարան քարոզութեամբը. եւ այս հոգւով մտաւ դարձեալ հայ հասարակութեան մէջ:

Դ.

Վարդան Արքեպ. Յունանեան, Մեւրոն Եպ. Դասպասեան, Աբրահամ Եպ. Արծիւեան, Գրիգոր Արքեպ. Քիւփէլեան. Սարգիս առաքելական միսիննար ի Զմիւռնիա, Պրուսա. Սահակ Ահագնի դաւաճանութիւնը. Սարգիս ի Կ.Պոլիս: Կենսագրութիւն Սամուէլ Եպ. Երզնկացւոյ. Սարգիս կաթողիկեայ քարոզիչ ի Կ.Պոլիս, իբրեւ Առաջնորդ ի Ռոտտսթոյ 1755ին, դառնալով ի Կ.Պոլիս՝ կ'արտորուի ի Կիպրոս:

Կաթողիկէ հաւատքը Հայոց մէջ տարածելու համար Հռոմայ Ս. Ժողովն ի սկզբան հայագէտ լատին վանականներ, յետոյ Ուրբանեան Դպրատան հայ աշակերտները եւ 1700էն ետեւ՝ վերջնոց հետ նաեւ Մխիթարեան եւ Լիբանանու Անտոնեան Միաբաններ իբրեւ միսիննար (առաքեալ) կը ղրկէր Կ.Պոլիս եւ ասիական հայաբնակ գաւառները մինչեւ Կովկաս, Պարսկաստան եւ Հնդկաստան: Ասոնց եռանդուն եւ առաքելական գործունէութիւնը 1640էն ի վեր յառաջ բերած էր արդէն հայ կաթողիկեայ հասարակութիւններ, գլխաւոր քաղաքներու մէջ: